

ԱՌԱՇՆԵՐԻ Ու ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԵՐՎԱՆՏԵՄԻ
«ԴՈՆ ԿԻՒՈՏՈՒՄ»

ԱՍՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սերվանտեսը իր ստեղծագործությունների գլուխգործոց «Դոն Կի-
խոտը» ստեղծելիս համայն աշխարհի ընթերցողներին համարեց «պա-
րապ ընթերցողներ»: Այդ պահից ի վեր «Դոն Կիխոտը» դարձավ բոլոր
ժամանակների ոչ միայն ամենաընթերցվող գրքերից, այլև հայտնվեց
բազմաթիվ ուսումնասիրությունների, թարգմանությունների կիզակե-
տում: Կոստան¹ մ էր այդ մասին հեղինակը, երբ «պարապ ընթերցողնե-
րին» խոստովանեց. «*Շու առանց երդումների կկարողանաս հավատալ
ինձ, թե ինչպես եմ ուզում, որ այս գիրքը, իմ բանականության զավակը,
լինի ամենասքանչելին, նրբագեղը և խելացին այն բոլոր գրքերից, ինչ-
պիսիք կարելի է պատկերացնել*»¹:

Մյուս կողմից նա կարծես լավ էր պատկերացնում, թե որն է այդ
հաջողության գաղտնիքը, երբ նույն նախաբանում մեջբերում է իր բա-
րեկամի խորհուրդը. «... *հոգ տարեք նաև այն մասին, որ պատմվածքն
ընթերցելիս մեղամաղձոտը ծիծաղի, զվարճասերն ավելի զվարթանա,
պարզամիտը չձանձրանա, խելոքը հիանա ձեր հնարամտությամբ, որ-
պեսզի լուրջ մարդը չարհամարհի այն, իսկ ողջամիտը չմերժի իր գո-
վեստը*» (Թ 2, I, 23): Ուրեմն՝ Սերվանտեսը գտել էր հնարը. այն պետք է
գրված լիներ այնպիսի մի լեզվով, որ բոլորի համար լիներ: Սակայն
ինչպե՞ս էր դա հնարավոր, երբ տվյալ ժամանակաշրջանում ամեն ինչ
ծայրահեղությունից ծայրահեղություն էր. մարդիկ կա՛մ հարուստ էին,
կա՛մ ծայրահեղ աղքատ, կա՛մ կրթված էին, կա՛մ անգրագետ, կա՛մ
ստրկավաճառ էին, կա՛մ ստրուկ: Նման ծայրահեղությունների կողքին
պատահական չէ, որ Սերվանտեսը ստեղծեց հակասական կերպար-
ներ՝ Դոն Կիխոտ և Սանչո Պանսա: Երազկոտ, երևակայական և մտա-
ցածին աշխարհում ապրող Դոն Կիխոտին պետք էր իրատես, գոեհիկ և
որկրամով ուղեկից, իսկ Դոն Կիխոտի բարձրաշխարհիկ խոսքին Սան-

¹ Մեր ուսումնասիրության նյութը հայերեն երկու թարգմանություններից են Ա.
Ղազարյանի՝ ռուսերենից միջնորդավորված և Վ. Սարգսյանի՝ բնագրից կատարված
թարգմանությունները (տե՛ս 1. **Միգել դե Սերվանտես**, Հնարամիտ հիդալգո Դոն Կիխոտ
Լամանչեցի, թրգմ.՝ Ա. Ղազարյանի, (այսուհետև շարադրանքում՝ Թ 1, կնշվեն նաև
հատորն ու էջը) հ. 1, 2, Եր., 1950, 2. **Միգել դե Սերվանտես**, Հնարամիտ հիդալգո Դոն
Կիխոտ Լամանչեցի, թրգմ.՝ Վ. Սարգսյանի (այսուհետև շարադրանքում՝ Թ 2) հ. 1, 2,
Եր., 2010: Այստեղ՝ Թ 2, հ. 1, էջ 18):

չոն պիտի պատասխաներ գյուղական, հասարակ, անկիրթ լեզվով: Ստեղծագործության մեջ մեկ անգամ չէ, որ համոզվում ենք դրանում: Դոն Կիխոտը Սանչոյին շարունակ ուղղում է, ինչպես հետևյալ օրինակում. «**Էրուկտար, Սանչո, նշանակում է գկոտալ, որ իսպաներենում ասում են *ռեզոլդար*. Բայց այդ բառը մեր լեզվում ամենազգվելի բառերից մեկն է, թեպետ և շատ արտահայտիչ է: Ուստի կրթված մարդիկ դիմել են լատիներենին և *ռեզոլդար* բառը փոխարինել են *էրուկտար* բառով, իսկ *ռեզոլդարոս* բառի փոխարեն ասում են *էրուկտրասիոնես* «գկոտոցներ» (ընդգծումները մերն են - Ա. Խ.): Եվ ամեննին կարևոր չէ, որ ոչ բոլորն են հասկանում այդ բառերը. ժամանակի ընթացքում դրանց գործածությունը կտարածվի, իսկ իմաստը հեշտությամբ կհասկացվի: Դա համարվում է լեզվի հարստացում, որի մեջ մեծ դեր ունեն սովորությունն ու հասարակ ժողովուրդը» (Թ 2, II, XLIII, 296):**

Դոն Կիխոտը բազմաթիվ անգամներ բացատրում է Սանչոյին այս կամ այն բառի նշանակությունը, մեջբերումներ անում Աստվածաշնչից, լատիներենով հղումներ կատարում, բացատրում արաբերեն բառերը, ինչպես նաև տալիս դրանց ստուգաբանությունները: Սանչոն, ընդհակառակը. նրա կերպարը տիպականացվում է թերևս իր լեզվով: Նա ոչ միայն չէր հասկանում գրական բառերի նշանակությունը, այլև շփոթում էր դրանք պատեհ-անպատեհ առիթներով: Ահա նաև այսպես է Սերվանտեսը անհատականացնում այդ կերպարներից յուրաքանչյուրին.

- Պիտի ասես *պախարակում*, այլ ոչ թե *պաղարակում*, - ասաց Դոն Կիխոտը, - *ա՛յ ճիշտ խոսքի թշնամի, աստված թող պատժի քեզ:*

- *Դուք ինձ շատ մի նեղեք, ձերդ ողորմածություն, - պատասխանեց Սանչոն, - դուք լավ գիտեք, որ ես չեմ դաստիարակվել պալատում և չեմ սովորել Սալամանկայում, որպեսզի իմանամ, թե ինչ բառ պիտի ավել կամ պակաս ասեմ: Եվ հետո, գրողը տանի, չի կարելի ստիպել, որ սայգեցին խոսի տոլեդոցու պես, և այդ տոլեդոցիք էլ մի բարի պտուղ չեն խոսելու հարցում (Թ 2, II, XIX, 137):*

Սերվանտեսը «Դոն Կիխոտում» շարունակ կարևորում է գրական լեզվի արժեքը: Կարծում ենք՝ ամեննին էլ պատահական չէ, որ ամբողջ ստեղծագործության մեջ հանդես եկող հերոսները՝ բիսկայեցի, կատալոնացի և այլն, ունեն իրենց ուրույն խոսվածքը: Հեղինակը այս կերպ ի ցույց է դնում տարբեր տարածաշրջաններին հատուկ խոսքային մակարդակներ: Ստեղծագործության մեջ հեղինակը պարբերաբար արտահայտում է իր վերաբերմունքը յուրաքանչյուրի խոսքի նկատմամբ, ինչպես հետևյալ օրինակում. «*Տեսնելով, որ դոն Կիխոտը չի ուզում թողնել, որ կառքն առաջ գնա, այլ պահանջում է շրջվել դեպի Տոբոսո, մոտեցավ Դոն Կիխոտին և, բռնելով նրա նիզակը, կիսատ իսպաներենով և պրատ քասկերենով ասաց*» (Թ 2, I, VIII, 77): Այստեղ կարող ենք նկատել Վ. Սարգսյանի կողմից այդքան ճշգրիտ ընկալված՝ հեղինակի

վերաբերմունքը լեզվի հանդեպ: Բնագրում² հեղինակը ասում է. «...*en mala lengua castellana y peor viscaína...*» (I, VIII, 102), բառացի՝ *վատ իսպաներենով և ավելի վատ բասկերենով*, սակայն Թ 2-ում թարգմանիչը, միմյանցից առանձնացնելով *կիսատ-պոաստ* բառակապակցությունը, *կիսատը* վերագրել է իսպաներենին, իսկ *պոաստը*՝ բասկերենին: Դրանում համոզվում ենք, երբ նույն հեղինակի մեկ այլ ստեղծագործության³ թարգմանության մեջ հանդիպում ենք. «*Ուստի նա Լեոկադիային տարավ քաղաքապետարանի հրապարակը և այնտեղ, ձայնը փոխած, կեսպորտուզալերեն, կես-իսպաներեն, նրան ասաց, որ հանգիստ կարող էր գնալ իրենց տուն...*»: Այսպիսով, եթե *կես-կես* բարդության մեջ ընթերցողն ընկալում է հավասար վերաբերմունք երկու լեզուների հանդեպ, ապա նույնը չենք կարող ասել *կիսատ-պոաստի* համար, ինչպես համոզվում ենք բառարանային բացատրությունից ևս, որտեղ *պոաստը*⁴ ընկալվում է որպես թերի, անկատար մնացած բան: Մյուս թարգմանության մեջ Թ 1-ում հանդիպում ենք. «*Տեսնելով, որ նա չի ուզում թողնի, կառքն առաջ ընթանա և պահանջում է, որպեսզի նրանք բոլորն էլ անմիջապես ետ գնան Տոբոտ, մոտեցավ նրան և բռնելով նրա նիզակը, կաստիլյայի վատ լեզվով և ավելի վատթար բիսկայերեն այսպես խոսեց*» (Թ 1, I, VII, 68): Այս թարգմանության մեջ ունենք մեկ այլ խնդիր: Թարգմանիչը, իհարկե, փորձել է ցույց տալ աստիճանավորումը՝ կիրառելով *վատ* և *վատթար* բառերը, սակայն «*կաստիլյայի՝ վատ լեզուն*» ընկալվում է որպես բացասական վերաբերմունք հենց իսպաներենի հանդեպ, մինչդեռ հեղինակը, ընդհակառակը, փորձում էր շեշտել հերոսի խոսքային մակարդակը:

Չենք բուն իսպաներենի հանդեպ հեղինակի վերաբերմունքը ակնհայտ է դառնում, երբ ստեղծագործության մեջ հանդիպում ենք. «*Բայց այդ պահին, երբ անցնում էր ուխտավորների շարքի միջով, նրանցից մեկը, ուշադիր գննելով Սանչոյին, նետվեց նրա վրա, գրկեց նրան գոտկատեղից վերև և մաքուր իսպաներենով բացականչեց*» (Թ 2, II, LIV, 378): Այսպիսով՝ հեղինակը նման մակդիրներով յուրաքանչյուր հերոսի խոսքի հանդեպ դրսևորում է իր վերաբերմունքը:

Այնուամենայնիվ, որքան էլ տարբեր լինեն Սանչոյի և Դոն Կիխո-

² Տե՛ս **M. de Cervantes**, *Don Quijote de la Mancha*, del estudio preliminar: F. Lázaro Carreter, edición de Francisco Rico, Esp. 2001:

³ Տե՛ս **Միգել Մերվանտես**, Խրատական նովելներ, Արյան ուժը, թրգմ.՝ Վ. Սարգսյանի, Եր., 2005, էջ 209:

⁴ Պոաստ, 1. Պոռջ՝ շրթունք չունեցող, 2. Շրթունքը՝ պռունկը կոտրված, 3. Կիսատ-պոաստ, ոչ լրիվ, 4. Կիսատ՝ անավարտ մնացած բան, որևէ բանի չավարտված մաս (տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1227, Եր., 1976):

Կաստեյանոն հենց նույն իսպաներեն լեզուն է, միջնադարյան իսպաներենը, որից և ձևավորվել է դասական լեզուն: Որպես արքունական լեզու այն համարվում է գրական լեզվի հիմքը: Լույսիսկ լատինամերիկացիները ունեն հետևյալ արտահայտությունները՝ *խոսում է կաստեյանո, հասկանում է կաստեյանո*՝ շեշտելու լատինամերիկյան իսպաներենի և գրական լեզվի տարբերությունները:

տի կերպարները, խոսքային մակարդակում նրանք ունեն մեկ ընդհանրություն, այն է՝ առածների և ասացվածքների կիրառությունը: Հեղինակը Սանչոյին, ինչպես նաև նրա ողջ ընտանիքին՝ կնոջը՝ Տերեսա Պանսային, և աղջկան՝ Սանչիկային, ներկայացնում է որպես ժողովրդական բանահյուսության կենդանի կրողներ: Չկա այնպիսի գրույց, որտեղ Սանչոն և իր ընտանիքի անդամները չմեջբերեն առածներ և ասացվածքներ՝ հավաստելու իրենց խոսքի ճշմարտացիությունը: Թվում է՝ նրանց ողջ կենսափորձը խարսխված է առածների և ասացվածքների վրա: Դոն Կիխոտի հետ հետևյալ գրույցում Սանչոն օգտագործում է դրանք՝ փաստելու իր յուրաքանչյուր մտքի հավաստիությունը. «- *Ես իմ անունը ստորագրել լավ գիտեմ, - պատասխանեց Սանչոն, - քանզի, երբ գյուղում կատարածուի օգնական էի, սովորել էի տառեր նկարել, որպիսիք լինում են հարկերի վրա, և ինձ ասում էին, թե դրանցից ստացվում է անունը: Բացի այդ, կձևացնեմ, թե աջ ձեռքս վնասված է և կիրամայեմ մեկ ուրիշին իմ փոխարեն ստորագրել. մեկ է՝ աշխարհում ամեն բան կարելի է ուղղել, բացի մահից: Գավազանն ու իշխանությունը ձեռքս կլինի, և ինչ կուզենամ՝ կանեմ, ինչպես ասում են՝ «**հերդ որ տանուտեր եղալ...**»: Իսկ ես իմ նահանգապետի պաշտոնով տանուտերից ավելի բարձր եմ լինելու, և թող փորձվի որևէ մեկը մի ծպտուն հանել: Թող բախտները փորձեն և իմ հետևից ինչ-որ բան ասեն. կզնան խուզելու, խուզված ետ կզան, աստված իր սիրեցյալի տան տեղը լավ գիտի: Հարուստի տխմար խոսքերը աշխարհում իմաստությունների տեղ են անցնում, և քանի որ ես հարուստ կլինեմ, քանզի նահանգապետ կդառնամ և կլինեմ շատ առատաձեռն, որպիսին մտադիր եմ լինել, ապա ոչ ոք իմ պակասությունները չի նկատի: **Ինձ պետք չի մեղր դառնալ, որ ճանձերը ուտեն, որքան ունես այնքան արժես, ասում էր տատս, իսկ ունևոր մարդու հետ գոյու չունես**» (Թ 2, II, XLII, 298): Ինչպես տեսնում ենք, միայն այս հատվածում Սանչոն ութ առած և ասացվածք է գործածում, որոնք, ինչ խոսք, անհատականացնում են իրեն և դառնում իր կերպարին հատուկ բնութագիր:*

Առածների և ասացվածքների նման առատությամբ մեկ անգամ չէ, որ աչքի է ընկնում Սանչոյի խոսքը, որից և համոզվում ենք, որ նման հնարը հեղինակը կիրառել է Սանչոյի կերպարը անհատականացնելու նպատակով: Ահա այսպես է Սանչոն պատկերացնում իր արտահայտվելու հնարը. «-*Ճիշտն ասած, ես էլ չգիտեմ, թե ինչ փորձանք է սա, - պատասխանեց Սանչոն, - ոչ մի բան չեմ կարողանում ասել առանց առածի, և չկա մի առած, որ ինձ հարմար և տեղին չթվա*» (Թ 2, II, LXXI, 493):

Դոն Կիխոտը ևս իր խոսքում կիրառում է բազմաթիվ առածներ և ասացվածքներ՝ նախ կարևորելով դրանց արժեքն ու նշանակությունը. «*Ինձ թվում է, Սանչո, որ բոլոր առածներն էլ իրենց մեջ ճշմարտություններ են պարունակում, քանի որ դրանք բոլորն էլ ծնվում են փորձից, որը բոլոր գիտությունների մայրն է*» (Թ 2, I, XXI, 166), ապա ոչ

պակաս կարևորում դրանց պատեհ կիրառությունը. «-Եվ իմացած եղեք, որոյակա, որ **«Բարի հույսը ավելի լավ է, քան խղճուկ ունեցվածքը»** և որ **«Եթե ուզում ես դատը շահել, պիտի մի քիչ էլ փող ընկնես»**: Այսպես եմ ասում, Մանչո, ցույց տալու համար, որ իմ բերանից էլ ասացվածքները կարող են անձրևի պես մաղել» (Թ 2, II, VII, 53):

Բազմաթիվ են այն գրույցները, որտեղ նա հանդիմանում է Մանչոյին՝ առածները և ասացվածքները անպատեհ կիրառելու համար, ինչպես. «-Աստծո անեծքը քեզ, Մանչո,- բացականչեց Դոն Կիխոտը,- վաթսուն հազար գրողի ծոցը կորչես քո առածների հետ միասին: Մի ժամ է իրար հետևից առածներ ես շարում և ամեն մի առածի հետ ինձ մի կում տանջանք ես տալիս: Հավատացնում եմ քեզ, որ այդ առածները մի օր քեզ հասցնելու են կախաղանի: Դրանց պատճառով քո հպատակները կվռնդեն քեզ կղզուց կամ էլ խռովություն կբարձրացնեն: Ասա ինձ, որտեղից էս դրանք հավաքում, անգետ արարած, և ինչպե՞ս ես իրար հետևից շարում, մինչդեռ, եթե ինձ պետք է, ես տանջվում ու տառապում եմ, ոնց որ հող փորեմ»:

Այնուհետև հանդիպում ենք. «- **Հերիք է առածաբանես, Մանչո,- ասաց Դոն Կիխոտը,- քանզի դրանից մեկն էլ բավական է, որ մտքինդ պարզ արտահայտես: Քանի անգամ եմ քեզ ասել, որ այդքան առածներ մի լից իրար գլխի, այլ չափավոր օգտվիր դրանցից: Բայց քեզ որևէ խորհուրդ տալը նույնն է, թե անապատում քարոզ կարդալ **«Գայլի գլխին ավետարան են կարդում, իսկ նա ասում է՝ շուտ արեք, ոչխարը սարն անցավ»**» (Թ 2, II, LXVII, 469):**

Նմանատիպ գրույցները այնքան շատ են Դոն Կիխոտում, որ թարգմանիչ Վ. Սարգսյանը կարծես նոր տերմին է ստեղծել հայերենում ասելով՝ **հերիք է առածաբանես**: Հայերեն բացատրական բառարանները առաջարկում են *առակաբանել*, *խրատաբանել* բառերը, որոնք գուցե թարգմանչի համար օրինակ են ծառայել ստեղծելու իր տարբերակը: Բնագրում հեղինակը ասում է՝ **No más refranes, Sancho...** (II, LXVII, 1177), որ բառացի նշանակում է՝ **«Այլևս ոչ մի առած, Մանչո»**: Իսկ միջնորդավորված թարգմանության դեպքում հանդիպում ենք՝ **«Վերջ տուր առածներիդ, Մանչո...»** (Թ 1, II, LXVII, 497): Այսպիսով, Թ2-ում թարգմանիչը ստեղծել է **առածաբանել** բառը, որն այնքան բնորոշ է Մանչոյին, և կարծում ենք, ավելի հաջողված տարբերակ է:

Որքան էլ անվերջանալի թվան Մանչոյի և Դոն Կիխոտի վեճերը առածների և ասացվածքների շուրջ, ընթերցողը հեղինակային առաջին հնարը, որ հանդիպում է դեռևս նախաբանում, հենց առածն է, որտեղ հեղինակը ասում է. «...սակայն ես ի գորու չեմ եղել փոխելու բնության օրենքը, համաձայն որի, **յուրաքանչյուր էակ ծնում է իր նմանին**» (Թ 2, I, 18, Նախաբան): Հեղինակը ստեղծագործության մեջ առածներն ու ասացվածքները կիրառում է շուրջ երեք հարյուր անգամ: Առածներով և ասացվածքներով են խոսում Դոն Կիխոտի «լավ» բարեկամները՝ զար-

մուհին, քահանան, բակալավր Սամսոն Կառասկոն և վարսավիր վարպետ Նիկոլասը, սակայն առյուծի բաժինը պատկանում է Սանչոյին: Եթե մի պահ պատկերացնենք Սանչոյի կերպարն առանց առածների, համոզված ենք, որ այն չէր կարող լինել ամբողջական: Երբ Դոն Կիխոտը Սանչոյին ասում է՝ «*Երբ ես վերջ տալու, Սանչո, անիծվեա դու, - ...- երբ սկսում ես իրար հետևից շարել քո այդ առածներն ու հեքիաթները, միայն Հուդայի համբերությունը կհերիքի, երբ լսի քեզ, Հուդայի բաժին դառնաս*» (Թ 2, II, XIX, 137), ապա, յուրաքանչյուր ընթերցող «կամովին» դառնում է «Հուդա»՝ պատրաստ լսելու նրան մի ամբողջ հավերժություն:

Բանալի բառեր - *առած-ասացվածք, միջնորդավորված թարգմանություն, համարժեք տարբերակ, ոճական արժանիք, բնութագրիչ առանձնահատկություն, խոսքային մակարդակ, անհատականացնող հնար*

АСЯ ХАЧАТРЯН – *Стилистическая значимость пословиц и поговорок в «Дон Кихоте» Сервантеса в оригинале и армянских переводах.* – Среди стилистических достоинств «Дон Кихота» бросается в глаза широкое использование пословиц и поговорок. С их помощью писатель придаёт индивидуальность образам различных героев. Особенно это относится к такому колоритному персонажу, как Санчо Панса, чья речь буквально усеяна народными речениями.

Ценно, что в армянских переводах эта особенность оригинала понята и в достаточной степени сохранена.

Ключевые слова: *пословицы и поговорки, опосредованный перевод, равноценный вариант, стилистическая значимость, характерная особенность, речевой уровень, способ индивидуализации*

ASYA KHACHATRYAN – *The Stylistic Value of the Proverbs and Sayings in Don Quixote by Cervantes in the Original Text and Armenian Translations.* – The article pays a special attention to the proverbs and sayings ‘edited’ by Cervantes. Due to the technique of occasional calque the author made the ideas sharper and more objective giving a new sense and connotation to the text.

Armenian translators A. Ghazaryan (indirect translation) and V. Sargsyan (literary translation) mostly succeeded in their translations and managed to present the Armenian reader with the appropriate versions of the ‘editings’ by Cervantes. However, in case there was no equivalent of the proverb or saying, both translators made occasional mistakes, thus, distorting the main idea of the proverbs and sayings.

Key words: *proverbs and sayings, mediated translation, equivalent translation, stylistic value, characteristic feature, speech level, means of individualization*